*3.15. Առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկ, ըստ պահանջվող քանակի*

Շինարարության տևողությունը՝ 3.0 ամիս

Պահանջվող մեքենա-մեխանիզմների ցանկ

| *№* | *Անվանումը* | *Քանակ/հատ* |
|---|---|---|
| 1 | Էքսկավատոր՝ հակադարձ շերեփով V=0.5÷0.75մ$^3$ | 1 |
| 2 | Թրթուրավոր բուլդոզեր | 1 |
| 3 | Ավտոամբարձիչ (առնվազն 16մ սլաքի թռիչքով և 6տ բեռնունակությամբ) | 1 |
| 4 | Ինքնաթափ բեռնատար մեքենա 10տ բեռնատարողությամբ | 2 |
| 5 | Պնևմատիկ հարվածահար մուրճ | 1 |
| 6 | Շարժական էլեկտրաեռակցման սարքավորում | 1 |
| 7 | Խորքային թրթռիչ | 2 |
| 8 | Էլ Տախեոմետր | 1 |
| 9 | Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր | 1 |

*3.16. Առաջարկվող աշխատակազմի ցանկ*

| *№* | *Անվանումը* |
|---|---|
| 1 | Շիանարարության ղեկավար |
| 2 | Շինարարաության ճարտարագետ-շինարար |
| 3 | Շին. Մոնտաժային աշխատանքների աշխղեկ |
| 4. | Մետաղական կոնստրուկցիաների եռակցող |
| 5 | Ատաղձագործ |
| 6 | Բետոնագործ |
| 7 | Ներկարար |
| 8 | Գեոդեզիստ |

## 4. ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնման ենթակա բոլոր ապրանքներն ու նյութերը պետք է լինեն նոր, չօգտագործված, ամենավերջին կամ ընթացիկ մոդելների, և պետք է ներառեն բոլոր վերջին նորամուծությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր ընկերությունների կողմից արտադրվող սարքերը և սարքավորումները արտադրվում են իրարից որոշակիորեն տարբեր բնութագրերով և մոնտաժման տարբեր պայմաններով, Կապալառուն պարտավոր է սարքերի և սարքավորումների գնումն իրականացնելուց առաջ Պատվիրատուի հետ համաձայնեցնել գնվելիք սարքավորման բնութագրիչ տվյալները և Պատվիրատուի համաձայնության դեպքում միայն ձեռք բերել այդ սարքերը կամ սարքավորումները: